

Կարենիս բնակավայրում արդեն գործում է Նախակրթարան, իսկ Ֆանտանում հիմնանորոգվում է դպրոցի մարզադահլիճը

07.11.2019

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն այսօր հերթական աշխատանքային այցով Չարենցավան համայնքում էր:

Մարզպետը Նախ այցելել է Կարենիս բնակավայր, որտեղ մարզպետարան-համայնք համագործակցության արդյունքում և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում հիմնվել է Նախակրթարան:

Ներկայում Նախակրթարան է այցելում 12 երեխա: Նախակրթարանում առկա են բոլոր պայմանները փոքրիկների առօրյան առավել հետաքրքիր ու հագեցած դարձնելու համար:

Նշենք, որ երբեմն այս համայնքում Նախադպրոցական որեւէ հաստատություն չի գործել:

Հաջորդիվ Ռոմանոս Պետրոսյանն այցելել է Չարենցավանի բժշկական կենտրոնի՝ շուրջ 15 տարի շարունակ լքված մասնաշենք, որը կապիտալ հիմնանորոգվել է ու կծառայի որպես քաղաքային պոլիկլինիկա: Շենքն ունի երկու մուտք, երեք հարկ:

Մասնաշենքի հիմնանորոգված հարկաբաժնում կտեղակայվեն առանձնացված մանկական և թերապևտիկ մի շարք բաժանմունքներ: Արդեն նոյեմբեր ամսվա կեսերին տեղի կունենա պոլիկլինիկայի բացումը: Եռահարկ շենքը հիմնանորոգվում և կահավորվում է բացառապես մարզային ենթակառուցվածքի այս բուժ.կենտրոնի բյուջեի խնայողությունների հաշվին:

Բժշկական կենտրոն կատարած այցից հետո մարզպետը շրջել է նաև Չարենցավանի բակային տարածքներով, որտեղ համայնքապետարանի և կառավարության 55/45 տոկոս համաֆինանսավորմամբ, սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, իրականացվել են բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքներ:

12.500 քմ տարածքից ասֆալտապատվել է շուրջ 2.500 քմ տարածք: Նախապատվությունը տրվել է ծայրահեղ վատ վիճակում գտնվող բակային հատվածներին: Մնացյալ հատվածների ասֆալտապատման աշխատանքները կշարունակվեն արդեն հաջորդ տարի:

Ի դեպ, Չարենցավանում ներկայում կա շուրջ 200 բազմաբնակարան շենք:

Մարզպետի այցի հաջորդ կանգառը Ֆանտան բնակավայրի միջնակարգ դպրոցում էր, որի մարզադահլիճը Չարենցավան համայնքի բյուջեի միջոցներով հիմնանորոգվում է: Համայնքի ներդրումը կազմել է շուրջ 1.500.000 դրամ: Աշխատանքները Նախատեսված է ավարտին հասցնել մոտ մեկուկես ամսից:

Հիշեցնենք, որ այստեղ կա նաև Նախակրթարանի խնդիր:

Այցի ավարտին մարզպետը առաջարկել է հանդիպում-քննարկում կազմակերպել՝ խնդիրը խորքային հասկանալու, գնահատելու ու արդեն հաջորդ տարի նաև այստեղ սկսելու Նախակրթարան հիմնելու գործընթաց: